



ՅԱԿՈԲ ՔԷՍԵՆԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՄ

ՆՇԽԱՐՆԵՐ «ՆՈՐ ՍԱՐՈՒԹԱՅԻ» ԱԷՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՎԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԻՅ

Միջնադարի ասորի մատենագրութեան մէջ յայտնի են երկու հեղինակներ, որոնք կրում են «Մարութայ» անունը: Դրանցից առաջինը, որի գրչին պատկանում կամ վերագրվում են շարականներ, օրհներգեր վկաների մասին, Նիկիոյ ժողովի կանոնների թարգմանութիւնը, Նիկիոյ ժողովի պատմութիւնը, Կ. Պոլսի հաւատոյ հանգանակն ու դրա մեկնութիւնը (ուր, ի դէպ, դատապարտվում է Եւտիքէսը), Կոստանդինի ու Հեղինէի վարքը, վանականութեան պատմութիւնը, 410 թ. կայացած Սելեւկիա-Տիգրոնի ժողովի կանոնները¹, հայ թարգմանական մատենագրութեանը քաջ ծանօթ, «Վկայք արեւելից» սրբախօսական ժողովածուի հեղինակ Մարութայ Նիւրկերացին է († 420):

Երկրորդ Մարութան Զ.—է. դդ. մատենագիր է: Նա եղել է Տագրիտ քաղաքի մափրիանը՝ պատրիարքը (640—649): Յայտնի է հակաքաղկեդոնական դիրքորոշմամբ: Նրա գրչին պատկանում կամ վերագրվում են՝ Պատարագի եւ Աւետարանի մեկնութիւն (որը երբեմն ընծայվում է նախորդ Մարութային²), փոքրածաւալ ճառեր Նոր Կիրակիի վերաբերեալ, ճառ Աստուածայայտնութեան ջրօրհնէքի մասին, մի քանի տաղեր եւ սեղրաներ (խորհրդակատարութեան ժամանակ կատարուող աղօթքներ, չափածո օրհներգութիւններ, որոնց հեղինակային պատկանելութիւնը

¹ Տէս В. РАЙТ, Краткий очерк истории сирийской литературы, перевод с английского К. А. Тураевой, под редак. и с дополнениями проф. П. К. Коковцова, СПб., 1902, էջ 33, 94. И. ОРТИС ДЕ УРБИНА, Сирийская патрология, перевод с латинского М. В. Грацианского, М., 2011, էջ 53—57:

² Assemani-ն Աւետարանի մեկնութիւնը յստակօրէն վերագրում է Մարութայ Տագրիտցուն (տէս В. РАЙТ, Краткий очерк..., էջ 33, 94): Սեւերոս Եղեսացին (Թ. դ.) իր կազմած խմբագիր մեկնութեան մէջ, ի շարս այլ հեղինակների, գետեղել է նաեւ հատուածներ Մարութայի Աւետարանի մեկնութիւնից. դրանք վերաբերում են Ելից ԺԵ. 25-ին: Յայտնի են նաեւ Մարութայի Ելից ԺԶ. 1, Մտթ. ԻԶ. 6—14 տեղիների վերաբերեալ երկու լուծմունքներ, որոնք հրատ. G. MÖSINGER, Monumenta syriaca, v. II, Innsbruck, 1878, էջ 32, ըստ В. РАЙТ, Краткий очерк..., էջ 94. И. ОРТИС ДЕ УРБИНА, Сирийская патрология..., էջ 180:

տակաւին կարօտ է պարզաբանման)³: Մարութայ Տագրիտցու հակա-
քաղկեդոնական բացորոշ համոզումներով եւ ընթացքով է պայմանավո-
րուած այն ուշադրութիւնը, որ հայ եկեղեցական միտքը դարձրել է նրա
ժառանգութեան նկատմամբ: «Նոր Մարութայի» անունով հայերէն ձե-
ռագրերում կենցաղաւարում են հետեւեալ միավորները.

ա) Ի տաւնի Պասեֆին (խմբագիր մեկնութեան մէջ Մարութայի անու-
նով ներմուծուած հատուածներ),

բ) Նախերգան Ծննդեան Աւետ[արանին]՝ Ի Մարութայէ,

գ) Մկրտութեանն Տեառն նորին Մարութայի (= Նախերգան Մարութի Ի
Մկրտութիւն Տեառն),

դ) Ի Մար[ութայէ] պատնառ տաւնի Ողոգուման, որ թարգմանի բարեբա-
նութիւն,

ե) Մարութայի՝ Ի Դազար,

զ) [Նշխարք Ի մեկնութենէ Աւետարանի],

է) Երանելոյն Մարութայի հայրապետի՝ Ի խորհուրդ եկեղեցոյ. «Եւ
արար Բեսելիէլ. արդ տապանակն անփուտ...»,

ը) Ի խորհուրդ Երեմշաբաթի. «Պիտոյ են հաւատք...»,

թ) Վկայաբանութիւն սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի Պարսից եւ
այլոց վկայից:

ժ) Մարութայի արեւալիսկոպոսի Ի սուրբ յարութիւնն Քրիստոսի:

Ինչպէս պարզուած է, ա-ն ելից գրքի մի խմբագիր (շղթա) մեկնութիւն
է, որի մէջ կարելոր տեղ են զբաղեցնում Մարութայի անունով բերուած հա-
տուածները⁴: Ուստի պատահական չէ, որ ՄՄ, թիւ 1247 ձեռագրում (ԺԳ. դ.)
այն խորագրուած է «Մեծի հինգշաբաթի նորոյն Մարութայի» (290բ): Հա-
տուածների բովանդակութիւնը ենթադրել է տալիս, որ դրանք քաղուած են
Մարութայի վերն ակնարկուած Աւետարանի մեկնութիւնից: Յիշատակուած
բ-գ միավորները, դատելով դրանց բովանդակութիւնից, նոյնպէս մասերն
են «Նոր Մարութայի» աւետարանական մեկնութեան: Այլ է է-ի պարագան.
այն՝ իբրեւ ուրոյն ճառընտրային միաւոր, ներմուծուել է համանուն ժողո-
վածուի մէջ (ՄՄ, ձեռ. 993, թ. 551բ — 553ա): Բայց այն ոչ այլ բան է, քան
Մովսէս Քերթոզի (է. դ.) «Ի մեծի աւուր Տապանակին... որ Ի Կարիաթարիմ,
որ բերէ զտաւն Վարդավառի» ճառի մեկ հատուածը (Եւ արար Բեսելիէլ

³ Տե՛ս Ի. ՕՐԿԻՏ ԴԵ ՍՐԵԲԻՆԱ, Сирийская патрология..., էջ 180—18:

⁴ Տե՛ս Օ. ՎԱՐԴԱՋԱՐԵԱՆ, Թ. ՍՐԿ. ԵՐԱՆԵԱՆ, Ելից գրքի ԺԲ. գլխի մի անանուն մեկնութիւն,
«էջմիածին», 2010, թ., էջ 86—112:

զտապանակն... [Ելք ԼԶ. 1] — Արդ տապանակն յանփուտ փայտից...⁵)։ Ի դեպ, բացառելու համար Մովսէսի անունով տուեալ երկի թարգմանական լինելը՝ չմոռանանք արձանագրել, որ այստեղ վկայութիւններ են բերուած Եղիշէի՝ Յեսուի եւ Դատաւորաց մեկնութիւնից, ինչպէս նաեւ՝ Պետրոս Սիւնեցու Աստուածածնի ներբողից, Յովհան Մայրագոմեցու «Վերլուծութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմայ յաւրինեալ կարգաց» երկից⁶։ Թ՛ միավորը վերաբերում է Մարութայ Նփրկերտցու նշանաւոր «Վկայք արեւելից» ժողովածուին։ Անորոշ են մնում Ը, Ժ միավորները, որոնք, որքան տեղյակ ենք, յիշատակված չեն Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրային ուղեցոյցներում։

«Նոր Մարութայի» Աւետարանի ճառական մեկնութեան մաս կազմող ներկա հատուածները (բ-զ) բովանդակութեամբ ու բնագրային կերտուածքով յարաբերում են խմբագիր մեկնութեան մէջ զետեղուած քաղուածքներին։ Այսպէս.

Խմբագիր մեկնութիւն	Ի Մարութայէ պատճառ տաւնի Ողոգուման
Պետրոս ծեր գոլով, աւրինակ էր մարգարէիցն, եւ Յովհաննէս երիտասարդ՝ առաքելոցն («էջմիածին», 2010, Թ., էջ 110)։	Արդ, Քրիստոսի աշակերտքն՝ մինն Պետրոս էր եւ միւսն՝ Յովհաննէս։ Եւ որպէս ամենայն ուրէք զնոսա քան զայլսն նախապատիւ ունէր, այսպէս եւ աստ զնոսա առաքէր, եւ այսու մեծ իմն խորհուրդ յայտնէր, քանզի Պետրոս ծեր եւ հինաւորց գոլով եւ ամուսնացեալ՝ նշանակէր զդասս մարգարէիցն եւ Յովհաննէս երիտասարդ եւ կոյս՝ զդասս առաքելոցն։
Արդարեւ, մեծ եւ սքանչելի խորհուրդս այս, ո՛վ եղբարք (անդ, էջ 112)։	Նախերգան Ծննդեան Աւետ[արանին] Արդ, մեծ է ճշմարտապէս, ո՛վ եղբարք, խորհուրդս այս...։ Արդարեւ, մեծ եւ սքանչելի է...։

Հանդիպադիր այս հատուածներն ականբերելորեն մատնացոյց են անում մտածողութեան ընդհանրութիւն, ինչը կարող էր բնորոշ լինել նոյն հեղինակին։

⁵ Տէս ՄԶ, է. (յաւելուած), էջ 715–719։

⁶ Այս մասին տես Յ. ՔէօՍՍԷԱՆ, Ներածութիւն հայ եկեղեցական մատենագրութեան, Եր., 2018, էջ 158–159։

Մեկնութեան մէջ կիրառուած է բարոյախորհրդաբանական եղանակը, որը սնվում է բացատրութեան եփրեմեան սկզբունքից եւ ըստ այսմ՝ յատուկ էր Եդեսիա-մծբինեան դպրոցին:

Մարութայի մեկնութիւնն աչքի է ընկնում աստուածաբանական ինքնօրինակ դիտումներով: Այսպէս՝ ուշագրաւ է Ծննդեան եւ Աստուածյայտութեան տօնի բովանդակութեան դասակարգումը՝ համաձայն նրա այն ընկալման, որ կենցաղաւարում էր հեթանոսների, հրէաների եւ քրիստոնեաների մէջ: Հեղինակը նկատում է, որ նոյն տօնը կատարում են թէ՛ հեթանոսները, թէ՛ հրէաները եւ թէ՛ քրիստոնեաները, սակայն նրանց ըմբռնումներն էապէս զանազանուում են իրարից, «վասն զի հեթանոսացն մարմնական է եւ լի ամենայն պղծութեամբ, քանզի դիւական աւանդութիւն է, իսկ հրէիցն թէպէտ եւ մարմնական է, սակայն յԱստուծոյ աւանդեցաւ, այլ ոչ իբրեւ կատարելոց: Այլ առաւել բարձրագոյն մերս է քան զհրէիցն, քանզի ոչ եթէ վասն յիշատակի երկրաւոր բարութեանց եւ տվչութեան արինական զոհիցն տաւնեմք, այլ յաղագս երկնաւորացն, որ ի վեր է քան զայս աշխարհ, այսինքն՝ ծնունդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ...» (Նախերգան Ծննդեան): Այսու՝ Հին եւ նորկտակարանեան արժեքների համեմատութեան մէջ մեկնիչը նախադաս տեղ է յատկացնում Նորին: Մարդու լիակատար վերանորոգութեան համար Նա, Ով սկզբից մեզ ստեղծեց հողից, այժմ «...հնացեալ պատկերն վերստին նորոգեաց հրաշափառագոյն քան զառաջինն: Եւ այս ոչ էր բաւական ի ձեռն հրեշտակի կամ մարգարէի ուրուք կատարիլ, այլ կարաւտ էր այնմիկ, որ նախ ստեղծ զմեզ ի պատկեր իւր, զոր հնացուցաքն մեղաւք»: Ինչպէս դժվար չէ տեսնել, Մարութան մեկտեղում է Աստծու Որդու արարչական եւ քաւարար գործը՝ աստուածաբանօրէն շեշտելով երկրորդ պահի փրկաբանական բովանդակութիւնը:

Մարութայի հակաքաղկեդոնական կեցուածքն իր արտացոլումն է գտել ճառական մեկնութեան պահպանուած դրուագներում: Դրա ամենավառ վկայութիւնը Ծննդեան եւ Մկրտութեան տօնի մեկտեղումն է («Բայց արժան է նախ իմանալ, թէ զի՞նչ նշանակէ երկանունադրութիւն, այսինքն՝ Ծնունդ եւ Յայտնութիւն ի վերայ մի եւ նոյն տաւնի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...») (Նախերգան Ծննդեան), («Եւ զայս ասեմք՝ ոչ թէ այլոյ եւ այլոյ են տաւն Ծննդեան եւ Մկրտութեան») (Մկրտութեան Տեառն), («...տեսեալ եղեւ տեսիլ Աստուծոյ մսեղէն մարմնով, եւ է ճշմարտապէս ծնունդ Աստուծոյ») (Նախերգան Ծննդեան), («Վասն զի յորժամ երեւեցաւ, այսինքն՝ յայտնեցաւ Աստուած մարդկան՝ ծննդեամբ երեւեցաւ») (անդ),

(«կարատացաք Աստուծոյ մարմնանալոյն եւ մեռանելոյ» բառերը, որոնք ոչ առանց մասնայատուկ դիտաւորութեան քաղուած են Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից) (անդ⁷):

Ճառերի հակաքաղկեդոնական ուղղութիւնը թոյլ է տուել Վարդան Այգեկցուն դրանցից որոշ հատուածներ ներմուծել իր կազմած «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» դաւանաբանական ժողովածուի մէջ (1205 թ.)՝ «Մարութայի Նփրկերտոյ եպիսկոպոսի» անունով: Դրանք են.

«Որպէս ի սուրբ Պասքայն, զի նախ եկեր գառն ստուերին եւ ապա սկսաւ ճաշակել զհոգեւոր զատիկն:

Նորին յետ սակաւուց.

Եւ յետ ճաշակելոյ ստուերական գառինն, ապա արհնեաց զհացն եւ ետ նոցա, ըստ մեծին Պաւղոսի, որ ասէ, թէ՝ Յետ ընթրեացն առ Յիսուս հաց, գոհացաւ, եւ ըստ սուրբ աւետարանչին, որ ասէ. Յարեաւ Յիսուս ընթրեացն եւ զգեցաւ զղենճակ մի»⁸:

«Եւ զայս ասեմ ոչ եթէ այլ եւ այլ են տաւն Ծննդեանն եւ Մկրտութեանն, այլ ի միում աւուր տաւնել պարտ է. բայց վասն զի գործքս այլ եւ այլ են, որ այսար պատահեցաւ»⁹:

Վարդան Այգեկցին իր աշխատութեան է. գլխում («Վերստին վկայութիւնք յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ եռանձնեայ Աստուածութեանն եւ մի բնութեանն») դարձեալ «Մարութայ Նփրկերտոյ եպիսկոպոսի» անունով զետեղել է երկու հատուած, որոնք, դատելով բովանդակութիւնից, քաղուած են նոր Մարութայի Աւետարանի խնդրոյ առարկայ մեկնութիւնից¹⁰: Քանի որ դրանք բացակայում են մեզ յայտնի հրապարակումներում, այդ քաղուածքները եւս, իբրեւ մեկնութեան մասեր, ընդգրկել եմ ներկայ հրատարակութեան մէջ:

⁷ Այս քաղուածքը հիւրընկալուել է հայ դաւանաբանական գրականութեան մէջ եւս (տե՛ս Կ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրութեան մէջ, Եր., 1983, էջ 151):

⁸ «Մեծի Հինգշաբաթի նորոյն Մարութայի» (տե՛ս եւ հմմտ. ՄՄ, ձեռ. 1247, թ. 309բ). նաեւ տպ. «էջմիածին», 2010, թ., էջ 111. ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, աշխտ. տ. Շահէ քհն. Հայրապետեանի, Ներածութ.՝ Յ. Քէօսէեանի, Եր., 1998, էջ 250:

⁹ «Մկրտութեանն Տեառն նորին Մարութայի» (տե՛ս աստ):

¹⁰ ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, Գիրք հաստատութեան..., էջ 146: «Մարութայի Նփրկերտոյ եպիսկոպոսի» անունով քաղուածքներ բերուած են դաւանաբանական հետեւեալ միաւորներում. «Վկայութիւնք վասն ծննդեան Քրիստոսի եւ մկրտութեան, զի պարտ է տօնել ի միում աւուր, ի յունուարի 2.» (ՄՄ, ձեռ. 2543, թ. 4բ — 16ա. նաեւ՝ Հ. Յ. ՎՐԴ. ՏԱՇԵԱՆ, Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 722, 768), «Վկայութիւնք ընդդէմ նոցա, որք ասեն, թէ Տէրն ոչ եկեր զգառն հինգշաբաթին երեկոյին» (ՄՄ, ձեռ. 2543, թ. 16աբ), «Վկայութիւնք, զի պարտ է զնաչեցարն ասել ամենայն աւուր ի դէմս Որդոյ» (ՄՄ, ձեռ. 1324, թ. 310բ — 314բ):

Հրապարակուող միաւորներին բնագրային կերտուածքը ենթադրել է տալիս, որ դրանք տեղայնացուել են: Այդ են ցոյց տալիս ոչ միայն սուրբգրային եւ հայրախօսական վկայութիւնները, որոնք համընկնում են հայ ընկալեալ թարգմանութիւններին (օր.՝ «Մի՛ պակասեցէ իշխան ի Յուդայ եւ մի՛ պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ» [Ծննդ. ԽԹ. 10]¹¹ «Հիմն, ասէ, այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս» [Ա. Կորնթ. Գ. 11], «Մկրտութեանն Տեառն...», Զատեղիս քո, Տէր, ատեցի, եւ որոց կային հակառակ քո, բարկացայ կատարեալ ատեցի զնոսա, եւ եղեն իմ թշնամիք» [Սղմ. ՃԼԸ. 21–22], «Նստան իշխանք եւ շարախաւս կային զինէն» [Սղմ. ՃԺԸ. 23], «Զազգատոհմն նորա ո՞ր պատմեսցէ» [Ես. ԾԳ. 8], «Ոչ պատգամաւոր ոք եւ ոչ հրեշտակ, այլ ինքն՝ Տէրն եկեսցէ եւ փրկեսցէ զմեզ» [Ես. ԿԳ. 9], «Ես չեմ բաւական բռնել [բառնալ] զկաւշիկս նորա» [Մտթ. Գ. 11], «Առ սաստիկ հիւանդութեանց կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյն եւ մեռանելոյ». Գրիգոր Աստուածաբան, Ի Սուրբ Պասքայ», «Նախերգան Ծննդեան Աւետարանին»), այլեւ՝ թարգմանական գրականութեան մէջ տարածուած ստուգաբանական բառախաղի կիրառութիւնը. «Ովսանայն», զոր երգէին յերայեցւոցն ի մերս թարգմանի Աւրհնութիւն.... իսկ ստուգաբանութենէ իբր հարցմամբ իմն առնլի է զսոյն, թէ՛ «Ո՞վ է սա...» («Պատճառ տաւնի — Ողորդման...»):

Բնագրերը հրապարակում են ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերի.

1247 — Ժողովածոյ, ԺԳ. դար, թերթ՝ 349: Նիւթ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրութիւն՝ միասիւն:

1398 — Ժողովածոյ, ԺԴ. դար, թերթ՝ 473: Նիւթ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրութիւն՝ միասիւն:

2142 — Քարոզգիրք, 1419 թ., թերթ՝ 338: Գրիչ՝ Գրիգոր [1ա — 142բ], Բարսէղ քհնյ [143ա — 302ա], Անանուն [303ա — 337բ], ստացող՝ Սիմեոն կր.: Նիւթ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրութիւն՝ միասիւն:

2195 — Տոնապատճառ, ԺԳ. դար: Թերթ՝ 412: Գրիչ, ծաղկող՝ Յովանէս: Նիւթ՝ թուղթ: Գիր՝ բոլորգիր: Գրութիւն՝ միասիւն:

6617 — Ժողովածոյ, 1618 թ., վայր՝ Շօշ: Թերթ՝ 269: Գրիչ, ստացող՝ Աւետիս: Նիւթ՝ թուղթ: Գիր՝ նոտրգիր: Գրութիւն՝ միասիւն:

¹¹ Տե՛ս Գիրք Ծննդոց, քննական բնագիր՝ աշխատասիրութեամբ Ա. Ս. Զեյթունեանի, Եր., 1985, էջ 385:

ՆԱԽԵՐԱՆ ԾԱՆՈԹԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ՝ ՍԱՐՈՒԹԱՅԷ¹²

Որպէս յաստեղս արեգակնն եւ ի կենդանին գլուխն եւ ի թիւս միական զառաջինն ունի զգասատրութիւն¹³, այսպէս եւ յամենայն հրաշափառ գործսն Քրիստոսի, զորս մարմնով տնաւրինեաց ի պէտս փրկութեան մերոյ իբրեւ զղշիւն եւ մայր է բոլորիցն Ծննդեանս տաւն: Եւ զի այսպէս է, ո՛վ սիրելիք, պարտ է մեզ առաւել քան զայլսն ի սոյն դեգերել եւ աստուածաշունչ գրոց նպաստաւորութեամբ փոքր ի շատէ հասու լինել անհաս խորհրդոյ տաւնիս: Բայց արժան է նախ իմանալ, թէ զինչ նշանակէ երկանունութիւն¹⁴, այսինքն՝ Ծնունդ եւ Յայտնութիւն ի վերայ մի եւ նոյն տաւնի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ապա փոքր ի շատէ ասել ինչ եւ վասն հրէից տաւնից, մանաւանդ հեթանոսական տաւնին, որք յանաստուածութեան գոլով աստուածս անուանէին, եւ դարձեալ թէ որպիսի բարութիւնք յոյժ բարձրագոյն քան զառաջինսն պարգեւեցան մեզ, եւ թէ վասն էր Ինքն՝ Բանն Աստուած եկն մեզ ի փրկութիւն եւ ոչ հրեշտակ ոք առաքեաց, եւ թէ վասն որո՞յ իրաց այնքան ուրախացան զաւրք երկնից ընդ բարիսն, որ շնորհեցաւ մեզ: Զկնի որոյ ասասցուք եւ վասն ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յայսմ աւուր եղեւ:

Արդ, մեծ է ճշմարտապէս, ո՛վ եղբարք, խորհուրդս այս, ըստ ասելոյն Պաւղոսի, որ յայտնեցաւ այսաւր ի Բեթղէէմ, «եւ արդարացաւ հոգով, եւ քարոզեցաւ հեթանոսաց, եւ հաւատարիմ եղեւ յաշխարհի, եւ վերացաւ փառաւք» (Ա. Տիմ. Գ. 16): Եւ քանզի այսպէս արդարեւ մեծ եւ սքանչելի է՝ բազում արթնութեան պէտք են եւ ստէպ աղաւթից առ ի կարող լինել մեզ իմաստութեամբ հայել ի գիրս սուրբ աւրինաց եւ մարգարէից, եւ ի նոցունց ըստ կարի մերում ճանաչել զխորհրդոյս զաւրութիւն մեծիս յսորիկ աւուր: Բայց նախ քան զամենայն, որ հանդերձեալս էառ ի մէնջ ասել ձեզ այս է: Աղաչեմ զձեզ, եղբարք, որպէս զի լռութիւն ստացեալ ձեր, սիրով ընկալչիք զբանս իմ մանաւանդ, թէ զՍուրբ Գրոց բանս, եւ ոչ զյինէն

¹² Աղբիւր.

Ա = ՄՄ, ձեռ. 1247, Թ. 118ա – 124ա:

Ա. Աւետարանին:

¹³ Զիք ՆԲԶ-ում:

¹⁴ Զիք ՆԲԶ-ում:

ինչ ասացեալս, որպէս զի աստուածային իմաստիւք առլցեալք յագեցութեամբն, որ ոչ թափի: Այլ եւ զայսպիսի բարւոք յաւժարութիւն մտաց բազում անգամ խափանէ եւ տկարութիւն մարմնոյ եւ հոգք աշխարհականս զբաղմանց: Եւ արդ, վասն զի ջերմն փութով տեսանեմ զյաւժարութիւնդ ձեր, որպէս զի անհագաբար պատրաստեա էք առ ի լսել զբանս աստուածաշունչ Գրոց, որ է անապական, եւ ստոյգ փափկութիւն խնդամբ առ այս: Նաեւ ուրախութիւն մեր այս է, յորժամ ուսումնասէրս եւ առ աւատակարսն պատրաստս տեսանեմ զձեզ. վասն զի որ ճշմարիտ ուսումնասէր է, նա, արդարեւ, պտղաբեր լինիցի. զոր արինակ յորժամ կամիցի ոք զցորեան կամ զայլ ինչ ի յաւգտակարաց¹⁵ սերմանեաց ի յերկիր սերմանել, ոչ միայն փութայ ձգել սերմանիսն, այլ եւ աշխատասիրաբար ընդ հողովն թագուցանէ: Այսպէս է իմանալ առ աստուածային բանն, զի ոչ եթէ յորժամ ունկն միայն լսէ զնա արդիւնաւորի ի նմա, այլ յորժամ ի խորս սրտին տպաւորի, յայնժամ եւս պտղաբերի առ ստացիչն իւր: Բեւեռեցուք եւ այժմ, եղբարք, ի միտս մեր զուսումն քահանայական¹⁶ զգրեալսն մեզ մարգարէիցն վասն փրկական գալստեան Տեառն մերոյ, զոր հանդերձեալ եմք ճառել: Եւ տեսցուք մտաւք հեզութեամբ եւ խոնարհութեամբ զամենեցունց փրկիչն Քրիստոս, մերձեցուք առ նա հանդարտութեամբ եւ մի՛ ծուլացուք առ ի լսել զնորայն վասն մեր աղքատութեան, որով ճոխացեալք եղաք: Զի թէ էր ինչ, եւ պատմէր ոք այժմ առաջի ձեր զմարմնաւոր պատերազմէ եւ զոմանց յաղթութենէ եւ զայլոց պարտութենէ միթէ՞ յագենայիք արդեւք առ ի լսելն. եւ ոչ երբէք: Եւ եթէ մարմնաւոր թագաւորի պատմութիւն այնչափ զարմանալի է՝ որչափ եւս առաւել մեծ եւ բարձրագոյն է, եթէ որպէս երկնաւոր Թագաւորն այն, որ նստի յերկինս երկնից ի վերայ «Աթոռոյն բարձրացելոյ եւ վերացելոյ» (Ես. 2. 1) Աստուածն յաւիտենական, անմարմին եւ անսահմանելին իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ եւ «ընդ մարդկան շրջեցաւ» (Բարուք Գ. 38): Արդ, զայս ուրախութիւնս լցեալ եւ կատարեալ ետես Հոգւոյն աշաւք երանելին Դաւիթ եւ յայտ յանդիման քարոզեաց ուրախութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց զխորհուրդ տնաւրինական մարդեղութեան Քրիստոսի, եւ ասէ. «Ուրախ լիցին երկինք, եւ ցնծասցէ երկիր, զուարճասցի ծով լրիւ իւրով» (Սղմ. ՂԵ. 11): Ապա զպատճառս ուրախութեան յաւելու եւ ասէ. «առաջի Տեառն, որ գա դատել զերկիր» (Սղմ. ՂԵ. 11, 13).

¹⁵ Զեռ.՝ յաւկտակարաց:

¹⁶ Զեռ.՝ քահանայական:

եկն ճշմարտապէս, որ ծածուկն էր յամենայնէ եւ էջ յարգանդն Մարիա-մու, եւ յանձն առ լինել մարդ ի կնոջէ, զի մեք բարձրացուք:

Այլ, վասն զի տաւն է Ծննդեան եւ Յայտնութեան Փրկչին մանաւանդ, թէ տեսութիւն Աստուծոյ, զի այսպէս վայել է ասել, վասն զի ծննդեամբ¹⁷ յայտնեցաւ, եւ տեսեալ եղեւ տեսիլ Աստուծոյ մսեղէն մարմնով, եւ է ճշմարտապէս ծնունդ Աստուծոյ մարթի ասել երկու անուանս միոյ գործոյ, այսինքն՝ Ծնունդ եւ Յայտնութիւն: Վասն զի յորժամ յայտնեցաւ Աստուած մարդկան՝ ծննդեամբ երեւեցաւ: Քննեսցուք, որչափ հասանելի է մեզ, եւ զպատճառս ծննդեանն: Արդ, երկուս ծնունդս գիտեմք Որդւոյն Աստուծոյ. մի զառաջինն, որ է մշտնջենական եւ էական ի Հաւրէ եւ միւս եւս զերկրորդս, որ է մարմնով՝ ի Կուսէ, եւ զառաջինն ի Հաւրէ անմայր, իսկ երկրորդս ի Մաւրէ անհայր: Եւ այն ի վեր քան զժամանակ, իսկ այս ի ներքոյ ժամանակաց, եւ այն ի վեր քան զգիտութիւն մտաւորաց եւ բանաւորաց, իսկ այս փոքր ի շատէ ինչ խորհուրդ է յայտնեալ, որ է փրկութիւն մեր: Եւ այժմ ոչ եթէ մեք զառաջին ծննդենէն պատմեմք, վասն զի յոյժ ի վեր է քան զմեզ եւ քան զամենայն արարածական բնութիւնս եւ եւս անհասանելի է մտաց եւ անպատմելի շրթանց: Վկայէ այսորիկ եւ մարգարէն Նսախաս, ասէ. «Ձազգատոհմն նորա զպատմեսցէ» (Նս. ԾԳ. 8): Այլ ասեմք փոքր ի շատէ վասն մարմնով երկրորդ ծննդեանս որչափ տացի մեզ ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Վասն այսորիկ ծնաւ մարմնով ի վեր քան զսահման բնութեանս անապական ի սրբոյ Կուսէն. նախ զի խափանեսցին մեղքն, եւ ծնեալք լիցուք հոգեւորապէս, եւ զի լուծցին դատակնիք երկանց նախամաւրն ծննդեան: Եւ դարձեալ առ ի լուսաւորել զգիտութիւն մեր՝ իմաստութեամբ հայել առ էական ծնունդն, որ ի Հաւրէ, եւ յայսմանէ իմանալ, թէ որպէս ծնաւ մարմնով ի Մաւրէ միայն առանց հաղորդութեան արեան, զոր բնութեան ոչ է սովորութիւն այսպէս, որչափ եւս առաւել հաւատարիմ է, որ ծնաւ ի Հաւրէ՝ էական, ինքնական ծնունդ անմայր: Եւ քանզի զամենայն աւուրս ցնծութեան մերոյ տաւն կոչեմք հասարակաբար՝ պարտ եւ արժան է մեզ իմանալ եւ զարդար եւ զառանձնաւորութիւն այսր անուան:

Տաւն կոչի եւ հրէից, եւ հեթանոսացն. որպէս հրէայքն զփրկութիւն իւրեանց յԵզրիպտոսէ, եւ զտվչութիւն աւրինացն տաւն կոչեն եւ զայլսն եւս, որ յԱստուծոյ պարգեւեցաւ նոցա բարութիւնքն: Այլ եւ հեթանոսք

¹⁷ Ձեռ.՝ ծննդեամբ. այսպէս եւ այլուր:

զգարշելի պղծութիւն իւրեանց զյառաջագոյն գործեցեալսն յիշատակէին եւ զնոյն լկտի շուայլութիւն լրբութեամբ կատարէին եւ տաւն անուանէին: Իսկ անուն տաւնի թարգմանի ուրախութիւն՝ հանդերձ յիշատակաւ իրացն, որ ունի զուրախութիւն: Զի զոր արինակ մարդդ անուն ոչ սահմանի ի միոյ իրէ, եթէ ոչ զամենայն իրս բնութեան, ըստ իմաստասիրացն սահմանադրութեան, ի միասին բովանդակապէս, այսպէս եւ ուրախութիւն միայն ոչ բերէ զսահման տաւնի, եթէ ոչ զյիշատակ առ նմին զուգեսցես: Արդ, տաւնեն եւ հեթանոսք, եւ հրէայք, որպէս ասացաք, տաւնեմք եւ մեք, այլ ոչ միաւրինակաբար¹⁸, քանզի յոյժ զանազանեալ են ի միմեանց հեռաւորութեամբ. վասն զի հեթանոսացն մարմնական է եւ լի ամենայն պղծութեամբ, քանզի դիւական ականդութիւն է, իսկ հրէիցն թէպէտ եւ մարմնական է, սակայն յԱստուծոյ ականդեցաւ, այլ ոչ իբրեւ կատարելոց: Այլ առաւել բարձրագոյն մերս է քան զհրէիցն, քանզի ոչ եթէ վասն յիշատակի երկրաւոր բարութեանց եւ տվչութեան արինական զոհիցն տաւնեմք, այլ՝ յաղագս երկնաւորացն, որ ի վեր է քան զայս աշխարհ, այսինքն՝ Ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի սուրբ եւ յանապական կուսէն Մարիամայ, եւ յիշատակ մեծամեծ եւ անճառելի բարեացն, որ այսաւր ի ծննդեան նորա մեզ պարգեւեցան: Եւ այս ոչ եթէ ըստ արժանեաց ինչ ընդունողացս, այլ ըստ ողորմութեան այնորիկ, որ պարգեւեացն:

Ասացուք եւ վասն շնորհացս առաւելութեան, որ յայսմ աւուր մեզ պարգեւեցան: Մեծ էր եւ սքանչելի երեւումն Աստուծոյ յԻսրայէլի յայնժամ ի Սինեայ լեռինն, յորժամ տուան արէնքն եւ անապատին՝ բարութիւնքն: Այլ եւս առաւել բարձրագոյն այս յայտնութեանս Աստուծոյ առ մեզ, որ այսաւր ի Բեթղէէմ երեւեցաւ, քանզի ոչ եթէ տախտակս ինչ քարեղէնս ընկալաք ի յուսումն եւ կամ մանանա տեղացեալ յաւդոց ի կերակուր, այլ զՈգին Սուրբ ի վարդապետ եւ զհացն կենաց զիջեալն յերկնից եւ յաշխարհի կեանս պարգեւեալ ի լիութիւն: Նաեւ ոչ առջին ստեղծուածն հաւասար է այսմ վերստին ստեղծուածոյս. զի թէպէտ եւ յայնժամ յոչ գոյից ի գոյութիւն եկաք եւ ի հողոյ մարդ ստեղծաք, եւ աստուածային ձեռաւքն ըստ կերպարանի նորա կերպարանեցաք եւ կեանք զփափկութիւն դրախտին ընկալաք, սակայն ի ձեռն պատուիրանազանցութեան փոխանակ դրախտին փափկութեան յերկիր փշոց կործանեցաք,

¹⁸ Զիք ՆԲՀ-ում:

եւ փոխանակ կենացն զմահ ժառանգեցաք, եւ փոխանակ զաւրութեան՝ տկարութիւն, եւ փոխանակ աւրհնութեան՝ անէծք, եւ փոխանակ աշալիքութեան՝ ամաւթ, եւ փոխանակ հանգստութեանն՝ աշխատութիւն, եւ փոխանակ խրախճանութեան՝ հալածանք: Իսկ այժմ ոչ այսպէս, այլ ի մարմնեղինաց հոգեւորք եղաք եւ յորդույ Ադամայ որդիք Աստուծոյ ծնաք, եւ փոխանակ մահու կեանք պարգեւեցան մեզ, եւ փոխանակ հիւանդութեան եւ անիծից եւ առաջին ամաւթոյն՝ անապականութիւն եւ աշալիքութիւն, եւ փոխանակ փշաքեր երկրի՝ զվերինն Նրուսաղէմ, որ է լի ամենայն բարութեամբ, ժառանգեցաք եւ ի սնոտի մոլորութենէ ապրեցաք, եւ ի խաւարէ եւ ի ստուերաց մահու, յորս պարաւանդեալ նստեաք աստուածային լուսովն լուսաւորեցաք, որպէս եւ գրեալ է, թէ՝ «Ժողովուրդ, որ նստէր ի խաւարի, ետես լոյս մեծ» (Ես. Թ. 2):

Բայց խնդրելի է, թէ վասն է՞ր ինքն Բանն Աստուած եկն մեզ ի փրկութիւն եւ ոչ զայլ ոք ի ծառայից իւրոց առաքեաց, որպէս եւ յառաջագոյն զՄովսէս՝ առ ժողովուրդն, եւ կամ զմի ոք ի հրեշտակացն պաշտանէից իւրոց: Եւ յորժամ եկն ընդէ՞ր ոչ այլով իւրի յեղանակաւ Քրիստոսն մարդ լինելով կամեցաւ զփրկութիւն մեր առնել: Վասն զի ձեռն պատուիրանացն Ադամայ յոյժ տկարացաւ մեղաւք մարդկային բնութիւնս եւ կարի իմն կարաւտ էր երկնաւոր բժշկին ողջացուցանել զնա ի չարաշար հիւանդութենէ մեղաց եւ նորոգել ի նմա զառաջինն գեղեցկութիւն իւր, զոր ի նախկին¹⁹ ստեղծմանն ունէր, ըստ մարգարէին ասելոյ, թէ՝ «Առ սաստիկ հիւանդութեանց կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյն եւ մեռանելոյ»²⁰: Եւ ոչ միայն բժշկել, այլ զի ընդ որս կացին եւ մնացին՝ թուակից արասցէ եւ ուրախութիւն արասցէ երկնաւոր զաւրացն: Վասն այնորիկ եկն այն, որ ի սկզբանէ էր եւ ստեղծ զմեզ ոչ ի հողոյ ըստ նախկին ստեղծմանն, այլ զի հնացեալ պատկերն վերստին նորոգեաց հրաշափառագոյն քան զառաջինն: Եւ այս ոչ էր բաւական ի ձեռն հրեշտակի կամ մարգարէի ուրուք կատարիլ, այլ կարաւտ էր այնմիկ, որ նախ ստեղծ զմեզ ի պատկեր իւր, զոր հնացուցաքն մեղաւքն: Վասն որոյ ինքն եկն ըստ Եսայեայ, թէ՝ «Ոչ պատգամաւոր ոք եւ ոչ հրեշտակ, այլ Ինքն՝ Տէրն եկեսցէ եւ փրկեսցէ զմեզ» (Ես. ԿԳ. 9): Զոր աւրինակ այր թագաւոր ոչ կամիցի թողուլ զքաղաք ժառանգութենէ իւրոյ ի ձեռս ատարի՝ թէպէտ

¹⁹ Զեռ.՝ նախկին. այսպէս եւ այլու:

²⁰ «Առ սաստիկ հիւանդութեանցն կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյն եւ մեռանելոյ» (տես Գրիգոր ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ, «Ի սուրբ Պատգայ», ՄՄ, ձեռ. 946, թ.125բ):

եւ քաղաքացիքն կամաւորութեամբ ապստամբիցեն ի նմանէ, այլ բազում հնարիւք յինքն ջանայ դարձուցանել, որպէս զի ի նմայ ծառայեսցեն եւ մի՛ աւտարաց. եւ զայս առնէ ի ձեռն ծառայից իւրոց է, զի գրաւք, եւ է, զի պատգամաւորաւք: Եւ եթէ այսու միայնիւ ոչ անսայցեն դառնալ առ նա՝ հարկ լինի այնուհետեւ ի ձեռն որդւոյ իւրում սիրելոյ զգործն վճարել, որպէս զի ի նովաւ ճանաչիցեն զստոյգ տէրն իւրեանց եւ ի բաց լքցեն զաւտարն: Այսպէս արար եւ Աստուած Հայր, յորում ետես զգործ ձեռաց իւրոց կամակար մտաւր տուեալ զանձինս աւտարին ի ծառայութիւն, ետ նախ զաւրէնսն, ապա առաքեաց զմարգարէսն, եւ քանզի աւրինացն ոչ լուաք եւ մարգարէիցն ոչ անսացաք՝ ապա, հարկեալ ի մարդասիրութենէ Իւրմէ, առաքեաց առ մեզ զՈրդին Իւր Միածին՝ զԲանն Աստուած, որ եկն եւ եղեւ ի կնոջէ, եւ փրկեաց զմեզ յիշխանութենէ սատանայի եւ վերադրեաց յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի: Եւ Ինքն Միածին Բանն Աստուած մարդ այն եղեւ եւ այնպէս ներգործեաց զփրկութիւն մեր, զի ի սկզբանն անմեղէ ստեղծ զմարդկային բնութիւն, եւ նա յազդմանէ²¹ չարին անկաւ ընդ մեղաւք: Իսկ բանսարկուն որպէս վասն Յովբայ այսպէս վասն ամենայն բնութեան մարդկան չարախաւս լինէր առ Աստուծոյ, ըստ ասելոյն Դաւթայ, թէ՝ «Նստան իշխանք եւ չարախաւս կային զինէն» (Սղմ. ՃԺԸ. 23): Եւ զայս ինչ ասէր իբր թէ մարդիկ անձնիշխան կամաւք գործեն զչարն, եւ բնութեամբ են յայն եւ ոչ իմովք ներգործութեամբք: Իսկ Արարիչն գիտելով զոր ստեղծն անմեղ եւ կամեցեալ արդարացունել զնոսին, եկն եւ էառ մարմինն ոչ զանմեղ, որ ի դրախտին երբեմն, այլ մեղանշականն, եւ մնացեալ անմեղ, ըստ մարգարէին ասելոյ, թէ՝ «Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա» (Սղմ. ԼԱ. 2): Եւ ի բնաւորականսն եւս գերագոյն կացեալ ամենայն բնութեանս եւ իւրով արդարութեամբն յամալթ արար զչարախաւսն եւ զզրպարտեալսս զմեզ, եւ զանգեալս վերստին կանգնեաց՝ երկնայնոցն դասակցելով:

Ասասցուք եւ վասն ուրախութեանց վերստին զաւրացն, թէ վասն էր եղեւ: Արդ, իբրեւ տեսին զաւրք երկնից զայսպիսի պարգեւս, որ գործեցան ի մեզ, հիացան, զարմացան եւ խնդացին, որպէս եւ գրեալ է, թէ՝ «Վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարէ, մեծ ուրախութիւն լինի յերկինս» (Ղուկ. ԺԵ. 7): Եւ յոյժ ուրախացան ընդ փրկութիւն մեր: Նաեւ զի ըստ արարչութեան հազորդակից եմք միմեանց մարդիկ եւ զաւրք երկնից, վասն զի ի

²¹ Ձեռ.՝ յազդմանէ:

միոյ արարչութեան ստեղծաք մանաւանդ, թէ անբան բնութիւնք գազանաց եւ անասնոց: Բայց վասն ըստ պատկերի Աստուծոյ լինելոյ մեր եւ բանաւոր բնութեանս առաւել հաղորդ եմք հրեշտակաց: Իսկ յորժամ անկաք ի փառացն եւ խոտորեցաք յԱստուծոյ եւ անպիտանացաք, տրտմութիւն եւ սուգ ստացան հրեշտակք երկնից վասն մեր: Նաեւ, զոր կարեւոր պարտ է ասել, թէ ընդ վշտակցութեան եւ թշնամիք եւ սիրելիք մեր եղեն հրեշտակք ըստ ասելոյ Դավթի, թէ՝ «Ձատելիս քո, Տէր, ատեցի, եւ որոց կացին հակառակ քո, բարկացայ կատարեալ, ատեցի զնոսա, եւ եղեն իմ թշնամիք» (Սղմ. ՃԼԸ. 21–22): Եւ զոր աւրինակ պաշտանեայք երկրաւոր թագաւորի, թշնամիք եւ ատելիք լինին ապստամբողաց²² տեառն իւրեանց եւ ընդդէմ հակառակ կան նոցա, այսպէս եղեն հրեշտակք առ մարդիկ: Իսկ յորժամ տեսին զաստուածասքանչ տնտեսութեան խորհուրդ խոնարհեալ բարերարութեամբ ի փրկութիւն մարդկան, յայնժամ ապա իբրեւ զնախնիք արարչութեան եւ ընտանիք Աստուծոյ յառաջագետ եղեալ հիացեալ սքանչացան եւ բերկրութեամբ առլցեալ փութանակի յաւետիսն ընթանային մարդկան. ոմն ի նոցանէ սրբոյ կուսին Մարիամայ աւետարանէր եւ ոմն Յուսէփայ քաջալերս տայր եւ միւսն հովուացն աւետարանէր, եւ այլք «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն» (Ղուկ. Բ. 14) գոչէին:

Եւ արդ, քանզի վասն ուրախութեան վերին զաւրացն ասացաք՝ ասասցուք վասն յղութեան եւ ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ զայսոսիկ աւետարանէ մեզ երանելի աւետարանիչն Մաթէոս ի յասելն իւրում այսպէս. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս» (Մտթ. Ա. 18), քանզի ասաց յառաջ:

[ՅԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԵՎՈՒԹԵԱՆ] ՄԱՐՈՒԹԱՅԻ ԱՍԱՅԵԱԼ²³

Եւ էր ծնունդն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի յաւուրս ձմերայնու Տբեթ ամսոյ ԻԱ.-ն, յաւուր հինգշաբաթոյ ի ծագել արեգականն ի յառաջին ժամունն: Հովիւքն ԺԵ. էին, եւ մոգքն²⁴ երեք թագաւորք էին: Առաջին թագաւորն Պարսից Մելքիոն, երկրորդ թագաւորն Հնդկաց Գասպար, երրորդ թագաւորն Արաբացոց Բաղտասար: Եւ երկոտասան զլիսաւորք զհետ նոցա, որոց անուանքն այս են ի կարգի. Բարխուրիդայ,

²² Ձեռ.՝ ապստամբողաց:

²³ Աղբիւր. ՄՄ, ձեռ. 6617, թ. 2բ – 3ա:

²⁴ Ձեռ.՝ մոգն:

Դադիմ շմայ, Բարդի շմայ, Շահապանահ, Խորանայ, Դդու շմայ, Դենշահապուհ, Խամարայ, Շաուրայ, Իաբանայ, Շահուրի, Շամարիամ²⁵: Իսկ զաւրքն հեծելոցն ընդ նոսին երկոտասան հազար: Ինն ամիս կացին ի ճանապարհի եւ ի Տբեթ ամսոյ ի երեք հասին Բեթղէհէմ, եւ զերիս աւուրս կացեալ առ Փրկիչն, եւ զվեց Տբեթ ամսոյն ելեալ գնացին ի յաշխարհն իւրեանց, ուստի եկեալ էին: Աւրհնեալ է Աստուած:

ՍԱՐՈՒԹԱՅ ՆՓՐԿԵՐՏՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՈՐ Է ՍՈՒՓԱՐԿԻՍՍ²⁶

Զի թէպէտ եւ տեսանիցեն զնա խանձարրապատեալ եւ ի մսուր եղեալ, սակայն Տէր ճանաչիցեն զնա հրեշտակաց եւ աւծեալ Աստուած՝ միաւորութեամբ մարմնոյն:

Նորին յետ սակաւուց.

Զի որպէս անդ մորենին տունկ փշեղէն ընկալաւ զհուրն Աստուած եւ ոչ կիզաւ, նոյնպէս եւ բնութիւնս մեր, որ ի ներքոյ անկեալ էր փշոյ մեղաց, խառնեալ միացաւ ի բնութիւն հրոյ Բանին Աստուծոյ եւ ոչ շփոթեցաւ, այլ եղեւ, որ ինչ առողին էր:

ՍԱՐՏՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ ՆՈՐԻՆ ՍԱՐՈՒԹԱՅԻ²⁷

Եւ արդ, վասն զի փրկական ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զաւր պատուեցաք, եղբարք, եկայք այսուհետեւ եւ վասն մկրտութեան խորհրդոյ ճառեսցուք: Իսկ եթէ յորոց յառաջագոյն ասացաք եւ

²⁵ Մարութայի երկուս յիշատակուած 12 մոզերի անունները նոյն այս հերթագայութեամբ առկայ են նաեւ «Պատմութիւն գալստեան մոզուց թագաւորացն յերկրպագութիւն նորածին Թագաւորին» գրութեան մէջ (ՄՄ, ձեռ. 2782, թ. 208ա. նաեւ Ն. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Երեք թագաւոր մոզերու զրոյցն հայկական մատենագրութեան մէջ եւ անոր կարեւորութիւնը, «Բազմավէպ», 1910, էջ 5): Այս փաստը ենթադրել է տալիս, թէ Մարութան եւ յիշեալ գրութեան հեղինակն իրենց ձեռքի տակ ունեցել են սուրբգրային նոյն պարականոնը:

²⁶ Աղբիւր.

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, Եր., 1998, էջ 146:

²⁷ Աղբիւրներ.

Ա = ՄՄ, ձեռ. 1247, թ. 124 ա – 125բ:

Բ = ՄՄ, ձեռ. 1398, թ. 410բ – 421ա:

Գ = ՄՄ, ձեռ. 2142, թ. 308բ – 309ա:

Դ = ՄՄ, ձեռ. 2195, թ. 264ա – 264բ:

Խորագիր՝ Բ Վասն Մկրտութեան Մարութայի է բանք / Գ Նախերգան Մարութի ի Մկրտութիւն Տեառն / Դ Մարութայի ի Մկրտութիւն Տեառն:

զնոյն դարձեալ վերստին առցուր, մի՛ ոք զարմացի²⁸, քանզի պարտ եւ արժան է մեզ²⁹ հաստատուն հիմն դնել, յորոյ վերայ անշարժ ամենայն տնտեսութեան խորհուրդք³⁰ շինին: Եւ հիմն ասեմք զՔրիստոս, ըստ առաքելական բանին. «Հիմն³¹, ասէ, այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն, որ է Յիսուս Քրիստոս» (Ա. Կորնթ. Գ. 11): Եւ զայս ասեմք ոչ թէ այլոյ եւ այլոյ են տաւն Ծննդեանն եւ Մկրտութեան: Բայց³² վասն զի գործքս այլ են Քրիստոսի³³, որ այսաւր կատարեցան³⁴: Ասասցուր եւ³⁵ զզանազանութիւն անուանց տաւնիս եւ զպատճառս³⁶ զանազանութեանց անուանց: Արդ, կոչի տաւն Ծննդեանն եւ տաւն Մկրտութեան, եւ տաւն լուսոյ³⁷, եւ տաւն ծագման: Եւ այսց³⁸ անուանց բազում խորհուրդք յայտնի³⁹ են, որ յայսմ աւուր գործեցան: Արդ⁴⁰, կոչի տաւն Ծննդեան, քանզի յայսմ աւուր ծնաւ Քրիստոս մարմնով ի Կուսէն⁴¹, այլ եւ զխորհրդական զհոգեւոր⁴² ծնունդս⁴³ մեր աւրինակէ, զոր մկրտութեամբ⁴⁴ կատարի, զոր նոյն ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաւաստի⁴⁵ ստուգութեամբ ասաց առ Նիկողիմոս⁴⁶, եթէ՝ «Ոչ ոք ծնցի, ասէ, վերստին ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ» (Յովհ. Գ. 3):

²⁸ Գ Գ > Եւ արդ, վասն զի... զարմացի:

²⁹ ԳԳ համարիմ] է մեզ:

³⁰ Գ խորհուրդքն:

³¹ Դ Հիմ:

³² Գ > Բայց:

³³ Դ քան] Քրիստոսի

³⁴ Բ > Եւ արդ... կատարեցան:

³⁵ Բ > Եւ:

³⁶ Գ զպատճառ:

³⁷ Գ լուսաւորութեան] լուսոյ:

³⁸ Բ այնց:

³⁹ Գ > յայտնի:

⁴⁰ Գ > Արդ/ Դ Արդ, կոչի տաւն Ծննդեան. ասասցուր եւ զանազանութիւն անուանց տաւնիս եւ զպատճառս զանազանութեանց անուանց: Արդ, կոչի տաւն Ծննդեանն եւ տաւն Մկրտութեան եւ տաւն լուսոյ, եւ տաւն ծագման: Եւ այսց անուանց բազում խորհուրդ են, որ յայսմ աւուր գործեցան: Արդ, կոչի տաւն Ծննդեան Քրիստոսի, զի այսմ աւուր ծնաւ Քրիստոս մարմնով ի սուրբ Կուսէն: Այլ եւ զխորհրդական եւ զհոգեւոր ծնունդս մեր աւրինակէ, զոր մկրտութեամբն կատարի, զոր նոյն ինքն Տէր ստուգութեամբ ասաց առ Նիկողիմոս, եթէ՝ «Ոչ ոք ծնցի, ասէ (բառս ի լուսանցս) վերստին ի ջրոյ եւ ի Հոգւոյ ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ» Արդ, կոչի տաւն Ծննդեանն եւ տաւն Մկրտութեան եւ տաւն լուսոյ... Աստուծոյ:

⁴¹ Բ ի Կուսէն մարմնով/ Գ ի սրբոյ Կուսէն:

⁴² Գ եւ զհոգեւոր:

⁴³ ԲԳ ծնունդն:

⁴⁴ Գ մկրտութեամբն:

⁴⁵ Գ > մեր Յիսուս... հաւաստի:

⁴⁶ Գ Նիկողիմոս:

Ասի եւ տաւն Մկրտութեան, քանզի ի սմա մկրտեցաւ Քրիստոս խոնարհութեամբ ի Յովհաննէ Մկրտչէ եւ ինքեամբ նկարագրեաց⁴⁷ զխորհուրդ նորոգման մերոյ, եւ հաստատեաց ի մեզ զխոնարհութիւն⁴⁸։ Կոչի եւ տաւն լուսոյ, վասն զի երրորդական լոյսն այսաւր յայտնեցաւ ի վերայ յորդախաղաց⁴⁹ վտակացն Յորդանանու. Որդի մկրտէր, Հայր ի վերուստ վկայէր, Հոգին Սուրբ իջանէր ի կերպարանս աղանոյ⁵⁰։ Ասի եւ ծագումն, վասն զի այսաւր ծագեաց մեզ լոյս ճշմարիտ ի Հաւրէ⁵¹ լուսոյ, եւ հաստատեալ հաւատարմացաւ ի լսելիս⁵² ամենեցուն Աստուած գոլ Հաւր եւ Հոգւոյն վկայութեամբ⁵³։ Այլ եւ Յովհաննէս իբրեւ մատամբ իւրիք ցուցանէր յայտնագոյն վկայութեամբն, եթէ՝ «Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի⁵⁴» (Յովհ. Ա. 29)։ Զի եթէ արեգական եւ լուսնի եւ աստեղաց երեւելն⁵⁵ ծագումն ասի, որ եղական⁵⁶ լոյսք ըստ ասելոյ աստուածաբանութեան, թէ⁵⁷՝ «Եղիցի լոյս, ասաց Աստուած⁵⁸, եւ եղեւ⁵⁹ լոյսն» (Ծննդ. Ա. 3), եւ թէ՝ «Արար Աստուած զլուսաւորսն» (Ծննդ. Ա. 14)։ Եւ լուսաւորք երեւելեացս միայն, այլ եւ փոխանորդեալք ի խաւարէ⁶⁰՝ որչափ եւս առաւել գալուստ եւ⁶¹ երեւումն արեգականն արդարութեան ծագումն անուանի, որ է⁶² անեղ, որ էն եւ⁶³ անսկիզբն եւ մշտնջենաւոր լոյս ոչ միայն զգալեացս⁶⁴, այլ եւ իմանալեացն երկնայնոց⁶⁵ եւ հոգւոց մարդկան։

⁴⁷ ԳԴ նկարեաց։

⁴⁸ ԱԲ խոնարհութիւն։

⁴⁹ Դ որդախաղաց։

⁵⁰ ԳԴ Հոգին իջանէր աղանակերպ] Հոգին Սուրբ... աղանոյ։

⁵¹ ԳԴ Հաւրէն։

⁵² Գ լսելիս մեր։

⁵³ ԳԴ վկայութեամբ Հաւր եւ Հոգւոյն։

⁵⁴ ԳԴ > Այլ եւ Յովհաննէս... աշխարհի։

⁵⁵ Դ որեւելն] երեւելն։

⁵⁶ Դ եղական / Դ եղականք են։

⁵⁷ ԳԴ ըստ այնմ, թէ ասաց Աստուած] ըստ ասելոյ..., թէ։

⁵⁸ Գ > ասաց Աստուած։

⁵⁹ Դ եղիցի։

⁶⁰ ԳԴ > եւ թէ արար Աստուած... ի խաւարէ։

⁶¹ Դ > գալուստ եւ։

⁶² Բ > անուանի, որ է։

⁶³ Գ որ է անէղ եւ] որ էն եւ։

⁶⁴ Ա սգալեաց։

⁶⁵ Գ > երկնայնոց։

Եւ արդ⁶⁶, վասն զի զպատճառ զանազանութեանց անուանց տաւ-
նիս⁶⁷ ասացաք, բեր այսուհետեւ ի⁶⁸ գեղեցիկ եւ⁶⁹ ճշմարտապատում
աւետարանական բանիցն զխորհուրդ պայծառացեալ աւուրս ըստ կա-
րի բացայայտեսցուք զգրեալսն ի լուսափայլ աւետարանչէն Մաթէո-
սէ, որ ասէ⁷⁰. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս⁷¹ Մկրտիչ քարո-
զել յանապատին Հրէաստանի եւ ասել. Ապաշխարեցէք, զի մերձեալ
է արքայութիւն երկնից»⁷² (Մտթ. Գ. 2): Եւ զոր արդեւ իցեն աւուրքն
այնոքիկ, եթէ ոչ յորում ոչ գոյր յերուսաղէմ թագաւոր եւ իշխան եւ «ոչ
պէտ յերանացն Յուդայ» (Ծննդ. ԽԹ. 10) առ ի կատարելոյ բանի նա-
հապետին Յակովբայ, որ ասաց, թէ՝ «Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ,
եւ մի՛ պետ յերանաց նորա մինչեւ եկեսցէ» (Ծննդ. ԽԹ. 10) Քրիստոս,
որ Տէրն է ամենայն թագաւորութեանց ի նոյն ժամանակս եւ յաւուրս
յորս բարձաւ թագաւորութիւն յիսրայէլէ եւ տուաւ հեթանոսաց, եկն
Յովհաննէս՝ քարոզել զՔրիստոս: Եւ ուստի՞ եկն. յանապատէն, յորում
եւ սնեալն իսկ էր: Եւ զինչ էր պատճառ սնանելոյ նորա յանապատին:
Այլ վասն զի, յորժամ Հերովդէս շար նախանձու վառեալ կոտորեաց
զմանկունսն Բեղղէէմի, Յովհաննէս յայն ժամանակի ծնեալ որպէս եւ
ստուգապէս քննել մարթասցեն ստուգի յաւետարանչացն: Իսկ ողջա-
խոհ ծերունին, Եղիսաբէթ մայրն Յովհաննու, որպէս ասէ բանն. իբ-
րեւ լուաւ զայն, արհամարհեաց զմահ առն իւրոյ, եւ առեալ զորդին
իւր, փախեալ յանապատ, զի մի՛ սպանցի հանդերձ մանկամբն: Եւ անդ
կացեալ զամս Լ. (30) մանկանն, ըստ տեսչութեան Աստուծոյ մինչեւ ի
ժամանակսն, յորում առաքեցաւ յԱստուծոյ քարոզել եւ մկրտել: Իսկ⁷³
«Յաւուրսն յայնոսիկ» ասելն ոչ զայն ինչ յայտ առնէ, թէ մինչ մանուկն
էր Քրիստոս⁷⁴:

⁶⁶ Այստեղ Բ-ի բնագիրը շարունակուում է այլաբնոյթ մի բնագրով (թ. 411ա — 420բ), որ
մաս է կազմում Եզեկիէլի (Խէ. 1—12) մի մեկնութեան. «Գիտելի է այս, զի երեք յեղանակաւ
մկրտութիւն աւանդեցաւ... Իսկ սկիզբն բանիս քննելի է վասն տեսեան մարգարէիս, թէ
զգալի աշաբ էտէս, զոր ինչ պատմես...»:

⁶⁷ ԳԳ > տաւնիս:

⁶⁸ Գ եւ] ի:

⁶⁹ Դ գեղեցիկն] ի գեղեցիկ եւ:

⁷⁰ Բ > Եւ արդ... որ ասէ:

⁷¹ Դ շար. չիք:

⁷² Ա մկրտէ] Մկրտիչ քարոզել... երկնից:

⁷³ Բ-ում բնագիրն այստեղից շարունակուում է լուսանցային «Ներսիսի» նշումից
սկսած:

⁷⁴ Գ > յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս... մանուկն էր Քրիստոս:

Աստուածայինքն ոչ ըստ մարդկայնոցս բերին ակամայ շարժումն եւ ըստ պատահման, այլ՝ կամաւորաբար եւ նախախնամութեամբ եւ որպէս ամենեքեան նոյն եւ մկրտութեան խորհուրդն, զի եկաց նա զամս Լ. (30) լռելայն ի նշանաց եւ ի վարդապետութենէ մինչեւ ի կատարումն հասակի մարմնոյ իւրում, եւ մեր հասարակական բնութեանս հաւատալի է առաքինութիւն եւ վարդապետութիւն: Եւ զի անմարդ էր Յովաննու առնուլ զձեռանէ նորա եւ շրջեցուցանել տանէ ի տուն եւ վկայելն զնմանէ, նորին աղագաւ նախ առաքեաց զՅովաննէս նախընթաց, զի փող հարցէ պատրաստեալ զճանապարհ մտի նորա: Վասն որոյ իբրեւ զձայն փողոս հնչեաց եւ ժողովեաց միահամուռ զժողովուրդն ի հրամանս թագաւորին, յայնժամ եւ ինքն՝ թագաւորն եկեալ ոչ ի փառս ճոխութեան հայրենի, զի եւ ոչ տանել կարէին այր ի կերպարանս մարմնոյգործութեան իբրեւ զմի ի բազմացս, զի դիւրաւ մերձեացին: Եւ ուստի՝ եկն Յորդանան. Գալիլէէ, այսինքն՝ ի Նազարէթ քաղաքէ, յորում բնակեալ էր ընդ ծնաւդին իւրոյ, մինչեւ ցայն վայր յետդարձին յԵգիպտոսէ, եւ ոչ գայր յիսկզբան երեւելոյ նորա յանապատէն, զի մի՛ ասիցեն, թէ առ միմեանս եկեալ եւ դաշն հաստատեալ. վասն այնորիկ վկայէ զնմանէ, այլ եկաց մինչեւ ի հաւաքումն ամենեցուն, որոց լսելի եղեն բանք քարոզութեան նորա եւ ապա եկն: Եւ զի յառաջագոյն, յորժամ լսեցին ի նմանէ զայնպիսի մեծամեծ վկայութիւնս, եթէ՝ «Որ զկնի իմ գայ, զաւրագոյն է քան զիս», (Ղուկ. Գ. 16) եւ «Ես չեմ բաւական բռնել զկաւշիկս նորա» (Մտթ. Գ. 11), եւ թէ՝ «Նա մկրտէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հոլր» (Ղուկ. Գ. 16): Մի՛ կարխեսցեն ի տեսանել զնա եկեալ առ Յովհաննէս, թէ իբրեւ կարաւտ գայ ի մկրտութիւն: Եւ դարձեալ Լ. (30) ամեա գալովն ի մկրտութիւն, յամաւթ արար զմարկիանացիսն, որ առ աշաւք ասէին զառեալ զմարմինն ի Կուսէն, զի թէ ոչ զգեցաւ ճշմարտապէս մարմին, ի մկրտութիւն որո՞վ մերձենայր՝ աստուածային բնութեամբն անըմբռնելի գոլով: Եւ Լ. (30) ամեա գալովն զմարդկութենէն յայտ առնէ եւ ոչ զմշտնջենաւոր աստուածութենէն: Իսկ առ ի միտս. քանզի Ադամն առաջին երեսնամեա ստեղծեալ, ընկալաւ զփշումն Հոգոյն, եւ ոչ պահեաց: Երկրորդ Ադամս եւ Տէր առեալ նոր ի բնութեամբ զեւթնեկի շնորհս իջմամբ Հոգոյն ի Յորդանան եւ ետ համաւորէն ծննդոց նորին աւագանաւն վերստին ծննդեամբն: Արդ, յաղագս այսոցիկ պատճառաց գայր ի Յորդանան՝ մկրտիլ ի Յովհանէ⁷⁵:

⁷⁵ Ա > Աստուածայինքն ոչ ըստ մարդկանոցս բերինմկրտիլ ի Յովհանէ:

Ի ՍԱՐԴՈՒԹԱՅՅ] ՊԱՏՃԱՌ ՏԱԽԻ ՈՂՈԳՈՍԱՆ, ՈՐ ԹԱՐԳՄԱՆԻ ԲԱՐԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ⁷⁶

Խնդրելի է, թէ է՞ր վասն, որ զի բազում անգամ եմուտ Քրիստոս յերուսաղէմ ի տաւնս եւ յամսոց գլուխս եւ ի շաբաթս, եւ ոչ այնոքիկ պատուին ի մէնջ տաւնիւք, բայց՝ մինս այս միայն. վասն զի մեծամեծ սքանչելիք գործեցան յայսմ աւուր քան յայլսն. նախ յարութիւն Ղազարու եւ ապա արհնութիւն ի բերանոյ մանկանցն երգեցեալ, նստեալ ի վերայ իշոյն, ժողովրդոցն առաջի եւ զկնի ընթանալն, տարածանելն զհանդերձսն եւ հատանել ոստս ծառոցն եւ նախ քան զամենեսեան՝ լուսաւորութիւն կուրացն:

Ասասցուք եւ վասն այս աւուրց հրաշագործութեանց: Արդ, յայսմ աւուր առաքեաց Քրիստոս Բ. (երկու)ս յաշակերտաց Իւրոց եւ ասէ. «Երթայք ի գեղդ, որ առաջի ձեր է, եւ անդր գտանիցէք էջ կապեալ եւ յաւանակ ընդ նմին, լուծէք եւ ածէք Ինձ, եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ՝ ասասցիք, թէ տեառն իւրեանց պիտոյ են, եւ թոյլ տացէ» (Մտթ. ԻԱ. 2): Արդ, Քրիստոսի աշակերտքն մինն Պետրոս էր եւ միւսն՝ Յովհաննէս: Եւ որպէս ամենայն ուրէք զնոսա քան զայլս նախապատիւ ունէր, այսպէս եւ աստ զնոսա առաքէր, եւ այսու մեծ իմն խորհուրդ յայտնէր, քանզի Պետրոս ծեր եւ հինաւուրց գոլով եւ ամուսնացեալ՝ նշանակէր զդասս մարգարէիցն եւ Յովհաննէս երիտասարդ եւ կոյս՝ զդասս առաքելոցն: Եւ էշն եւ աւանակն, զոր առաքեցան ածել, արինակէր ոմն զհեթանոսս եւ ոմն՝ զհրէայսն, քանզի հրէայք բեռնակիրք գոլով արինացն, հաւանեալք եւ մխեալք էին եւ տեղեակք⁷⁷ աստուածգիտութեան, իսկ հեթանոսք, ըստ արինի անմուղ եւ սանձակոտոր յովանակի, անհաւանք եւ անկիրթ էին աստուածածանութեան, որք ի գալ Բանին Աստուծոյ յերկիր, նախ հրաւիրեալք ի մարգարէիցն, կոչեցան յառաքելոցն եւ յերկուցն եղեն մի նոր ժողովուրդ եւ հանգիստ անախտ բնութեան, որք ի հրէից եւ ի հեթանոսաց: Սոքա կապեալ էին նախ ի փողոց կենցաղոյս. հրէայք՝ ի խտրութիւնս կերակրոց եւ աւուրց եւ յաւանդութիւնս ծերոցն, եւ հեթանոսք՝ ի զանազան ախտս եւ ի բազմաստուածութիւն խոտորեալք, որք արձակեցան առաքելովքն եւ քարոզութեամբ նոցին, եւ մկրտութեամբն իբրեւ հանդերձիւք վերարկեալք տեղի եւ ընդունարան յարդարեցան անմահ Արքային եկաւորութեան:

⁷⁶ Աղբիւր. ՄՄ, ձեռ. 1247 թ. 240բ — 246բ:

⁷⁷ Ձեռ.՝ տեղակք:

Խնդրելի է եւ այս, թէ ընդէ՛ր ի վերայ իշոյ նստաւ Քրիստոս եւ ոչ ի ձիս եւ ի ջորիս: Զի թէ զաղքատութիւն ասիցէ որ այսմ պատճառ՝ նաեւ այսմ եւս էր աղքատ, եւ որպէս հաւանեցոյց զմիտս տէրանց իշոյն⁷⁸ զէշն տալ, այսպէս դիւրին էր եւ զայլս առ ի ձիս եւ ի ջորիս հաւանեցուցանել տալ նմայ: Իսկ թէ որ վասն անմտութեան իշոյն ասիցէ առ ի խորհուրդ գոլ անմիտ հեթանոսաց՝ ասելի է, թէ ձի եւ ջորի եւս անմտագոյնք են, ըստ մարգարէին ասելոյ (տէ՛ս Սղմ. ԼԱ. 9): Այլ որպէս զամենայն գործս տնաւարէնութեան Իւրոյ Քրիստոս յաւրինակ մեզ կատարեաց, այսպէս եւ զայս, զի նստաւ ի վերայ իշոյ ոչ վասն պիտոյից ինչ, որ զամենայն աւուրս մարմնաւորութեան Իւրոյ հետիոտս ընթացաւ, ուստի եւ աշխատեալ վաստակէր ի ճանապարհին, այլ զի զպատուական խոնարհութիւն Իւր ամենեցուն ուսուցէ՝ զանձն տալով աւրինակ մանաւանդ, որ զկնի լինելոց էին քահանայք եւ առաջնորդք եկեղեցւոյ՝ մի՛ եւս յաւրանալ ի ձիս եւ ի ջորիս, բայց թէ վասն տկարութեան մարմնոյ խոնարհութեամբ նստել ի վերայ իշոյ, զի այսպէս վիշապն ապստամբ կործանեսցի, որ հպարտութեամբն ի վայր կործանեաց զառաջին ստեղծուածն, վասն որոյ եւ բանիւ երանեալ նախ զի խոնարհութիւն: Այժմ գործով զնոյն հաստատէ՝ նստելովն ի վերայ իշոյ առ ի խափանել զձիապարծիկ⁷⁹ կառամարտ պատերազմունս ճակատամարտիցն հպարտացելոց, եւ արեամբ խաչին Իւրոյ խաւսել զխաղաղութիւն ընդ ամենայն հեթանոսս:

Դարձեալ եւ զայն եւս քննելի է, թէ ընդէ՛ր ժողովուրդն զհանդերձս տարածանէին եւ ոստս ի ծառոց հատանէին եւ առ ոտս աւանակին արկանէին. զի թէ առ պատիւս առնելոյ նմա ասիցէ որ զայն՝ գրէթէ զձորձս պատուոյ վասն տարածանէին զոստս ի ծառոց հատանելով եւ առ ոտս աւանակին արկանելով՝ զո՞ր արդեւք պատիւ ցուցանիցէ: Այլ այսոքիկ հոգեւորապէս եւ խորհրդաբար իմացեալք բազում իմաստութիւնս մեզ ցուցանեն, քանզի տարածելն զհանդերձսն յանցս ճանապարհին նշանակէր զկատարելոց անձանց զհաւատսն, որ ի Քրիստոս, որ ոչ միայն թէ զերկրաւորս ամենայն հանդերձեալ էին թողուլ վասն սիրոյ նորա, այլ եւ՝ զմարմինս իւրեանց արեամբ չափ մերկանալոց էին ի վերայ նորա: Եւ զայս յայտնեն հոյլք սրբոց մարտիրոսացն, որք ոչ միայն մերկացան զաշխարհականս ամենայն, այլ եւ զանձինս եւս տանջանաւք եւ մահուամբ եղին ի վերայ սիրոյ նորա: Իսկ ոստքն թանձրացեալ ծառոցն, զորս

⁷⁸ Իշոյդ. ուղղման նշանով. բերուած է ըստ լուսանցի:

⁷⁹ Զիք ՆՔԶ-ում:

հատանէին եւ արկանէին ի ներքոյ ոտից յաւանակին նշանակէր զհաւատացելոցն ի Քրիստոս զամբարտաւանութիւն ընդգետնել եւ փոխանակ նորին զխոնարհութիւն յանձինս բերել, որով զաւրացեալք եւ զբարձրացեալ հպարտացեալ թշնամին հնազանդեցուցանէին ի ներքոյ ոտից իւրեանց: Եւ զայս ոչ զաւրութեամբ միայն, այլ նովաւ, որ ետ զաւրութիւն՝ կոխել զաւճս եւ զկարիճս (տէն Ղուկ. Ժ. 19) եւ զամենայն զաւրութիւն թշնամւոյն որպէս երանելի առաքեալքն քակեցին զամուր բանսարկուին եւ զբռնութիւն թագաւորաց եւ իմաստնոց յամալթ արարին: Զոր եւ աստուածընկալն Պաւղոս ասէ, թէ՝ «Զամուրս նորա քակեմք եւ զամենայն զաւրութիւն հպարտացեալ ի վերայ գիտութեան Աստուծոյ, եւ գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի» (Բ. Կորնթ. ԺԱ. 5):

Իսկ «Ուսանայն», զոր երգէին, յբերայեցւոցն ի մերս թարգմանի Աւրհնութիւն կամ Փրկութիւն կամ Մեծութիւն, իսկ ստուգաբանութենէ իբր հարցմամբ իմն առնլի է զսոյն, թէ՝ «Ո՛վ սա» , եւ պատասխանելի է սմին, թէ՝ Սա նա է, որ ոչ երբէք մեկնեցաւ ի հայրական ծոցոյ եւ յԱթոռոյ փառաց, եւ այժմ մերովս մարմնով նստեալ է ի վերայ հողեղէն յաւանակի:

Եւ «Աւրհնեալ եկեալ յանուն Տեառն» (Մտթ. ԻԳ. 39, Ղուկ. ԺԳ. 35), այսինքն թէ՝ ի բարձանց կամաւ Հաւր եկն յաշխարհս ի փրկութիւն մարդկան:

Տեսցուք եւ զայն եւս, թէ ուստի գիտացին ժողովուրդքն, թէ ձիթեն[ե]աւք եւ արմաւեն[ե]աւք արժան է գովել զգալուստն Քրիստոսի: Ոմանք ասացին, թէ վասն տաւնի Տաղաւարահարացն պատրաստեալ էին զձիթենիսն եւ զարմաւենիսն, եւ յորժամ տեսին զՔրիստոս այնպիսի խոնարհութեան կերպարանաւք մտեալ յԵրուսաղէմ, առին զնոյն եւ ելին ընդառաջ նորա: Բայց այս ոչ է ճշմարիտ, զի տաւն Տաղաւարահարացն յեաւթներորդ ամսեանն էր ի թշրին, եւ այս գալուստ Քրիստոսի յԵրուսաղէմ ի նիսան եղեւ, որ է առաջին ամիս: Իսկ այլք ասեն, թէ աւրէնս ունէին հրէայքն ի ծերոցն զարս արդարս այսպէս պատուել ի Դաւթայ ուսեալք, զոր ասէ. «Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին» (Սղմ. ՂԱ. 15), եւ թէ՝ «Ես որպէս ձիթենիս պտղալից» (Սղմ. ՄԱ. 10): Վասն որոյ եւ Քրիստոսի իբր մարգարէի զսոյն պատիւ մատուցին: Առ որ ասելի է, թէ ձիթեն[ե]աւք պատուին յիրաւի վասն գիւտի տնկոյն մերձ գոլ անդ լեառն Զիթեն[ե]աց: Արմաւենիքն ուստի էին. զի ոչ գոյին անդ պատրաստական: Բայց մեք զայսոսիկ թողցուք եւ տնաւրէնութեան խորհրդոյն իմասցուք զեղեալս,

յորմէ եւ իմաստութիւն ոչ սակաւ մեզ երեւի յայտնեալ, զի ոչ ըստ պատ-
րաստութեան եւ ոչ ըստ սովորութեան զայս արարին պատիւ Նմա, այլ ի
Հոգւոյն շարժեալք առ ի խորհուրդ փրկութեան մարգարէանային. վասն
զի ձիթենի զառակաւ աւրինակի ողորմութեան յինքեան ունի, ուստի եւ
զգալի⁸⁰ տեսութեամբ զնոյն ցուցանէ, քանզի ոչ թողու յինքենէ զազգա-
կիցն իւր զտերեւն արտաքս, որ է սիրոյ այս նշանակ, որ ողորմութենէ
ծնանի՝ ունի յինքեան եւ զպտուղս հաւատոյ, ուստի եղն զուարթարար
մզի, ըստ մարգարէութեան Դաւթի, որ է շնորհք Հոգւոյն Սրբոյ, որ առա-
տութեամբ հեղաւ ի միտս եւ յոգիս հաւատացելոց: Զոր եւ նոյն մարգարէ
ի բազում տեղիս զնոյն եղ եւ պարարտութիւն ձիթոյ մի անուամբ կոչէ.
«Աւժէր, ասէ, եղով զգլուխ իմ» (Սղմ. ԻԲ. 5), եւ «Ծերութիւն իմ ձէթ պա-
րարտութեան» (Սղմ. ՂԱ. 11), եւ իբրեւ եղ, որ իջանէ ի գլուխս Ահարո-
նի, այլ եւ ողորմութեան Աստուծոյ, որ առ Նոյի տերեւ ձիթենոյն տուաւ
առհաւատչեայ, եւ զյիմարաց կուսիցն զպակասութիւն ողորմածութեան
ի նուազումն ձիթոյ առակեաց Տէրն (տէս Մտթ. ԻԵ. 3–8): Եւ ամենայն
ուրեք աստուածային Գիրք ձիթենոյ նմանեցուցանեն զսուրբ եւ զողորմած
արս (տէս Սղմ. ՃԻԷ. 3. Սիրաք ԻԴ. 19. Ովսէ ԺԴ. 7):

Արդ, յայսմ ամենայնէ իմացեալ եղեւ, թէ վասն այսորիկ ոստաւք⁸¹
ձիթեն[ե]աւք փառաւորեցաւ Տէր մեր Յիսուս Քրիստոս, զի ծանիցեն
ամենեքեան, թէ ողորմած է, եւ միայն վասն մարդասիրութեան խոնար-
հեցաւ փրկել զազգս մարդկան: Իսկ արմաւենին, որ ստացեալ ունի յին-
քեան զբարձրութիւն եւ զուղղութիւն հասակի եւ զաճումն մեծութեան
քան զամենայն տունկս, եւ զի սիրտ նորա մի է, եւ ունի գոյն սպիտակ,
այլ եւ տերեւ նորա ունի նրբութիւն եւ սրութիւն ծայրից, եւ պտուղ նո-
րա, զի քաղցր է եւ վայելուչ: Արդ, բարձրութիւն արմաւենոյն նշանա-
կէ զերկնաւոր գալուստն Քրիստոսի, թէ բարձր եւ ի վեր է քան զամե-
նայն, որ այսաւր խոնարհութեամբ գովեցաւ ոստաւք արմաւեն[ե]աւք
ի մարդկանէ: Իսկ ուղղութիւն ծառոյն աւրինակէ զմարմնով գալուստ
նորա, որ թէպէտ զկորացեալ եւ զախտացեալ մարմինս մեր զգեցաւ⁸²,
սակայն ոչ ինչ հակամիտեալ ի յանիրաւ եւ ի սխալող⁸³ կիրս սորա զսոյն
եւ մարգարէն ասէ, թէ՝ «Ուղեղ է Տէր Աստուած մեր, եւ ոչ [գոյ ի նմա

⁸⁰ Ձեռ.՝ սգալի:

⁸¹ Ձեռ.՝ աստաւք:

⁸² Ձեռ.՝ սգեցաւ:

⁸³ Ձեռ.՝ սղալող:

անիրաւութիւն]» (Սղմ. ՂԱ. 16): Իսկ աճումն մեծութեան նկարագրէ զբարձրութիւն եկեղեցւոյ, ըստ ասելոյն Սողոմոնի առ հարսն, թէ՛ «նման է հասակդ⁸⁴ քո արմաւենոյ բարձրութեան» (Երգ է. 7), զի հարսնացեալ եկեղեցի աճեցեալ զանազան առաքինութեամբ «էհաս ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի» (Եփես. Դ. 13): Զոր եւ նոյն իմաստուն առակէ զփեսայն Քրիստոս յարմաւենի եւ զեկեղեցի՝ յոստս. «Ես ասացի, ասէ, ելանել յարմաւենին, եւ նայել յոստս նորա» (Երգ է. 8): Իսկ սիրտ նորա, զի մի է, ցուցանէ մեզ, թէ մի է բնութիւն Բանին Հաւր, որ միացաւ ի մարմնի, եւ այսաւր գովեցաւ ոստաւք արմաւեն[ե]աւք: Իսկ սպիտակութիւն յայտնէր, թէ սա է լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն էութիւնս: Իսկ նրբութիւն եւ սրութիւն տերեւոյն նշանակէ զքաջութիւն յաղթութեան Քրիստոսի, որ խոցեալ սպան զսատանա սրով Խաչին Իւրոյ եւ ետ մեզ խրախոյս նովին աւրինակաւ արեամբ չափ պատերազմել ընդդէմ մեքենայից նորա, ասէ. «Քաջալերեցարւք, զի ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺԶ. 23): Իսկ քաղցրութիւն պտղոյ նորա ուսուցանէ մեզ զքաղցրութիւն պտղոյ պատուիրանացն Քրիստոսի, որ առաւել է քան զմեղու խորիսխ (հմմտ. Սղմ. ԺԸ. 11), ըստ Դաւթայ երգոյն: Իսկ վայելչութեամբն աւրինակէ զգեղեցկութիւն արանց արդարոց, ըստ այնմ թէ՛ «Արդարք որպէս արմաւենիս ծաղկեսցին» (Սղմ. ՂԱ. 13), եւ թէ՛ «Ի տուն Տեառն ծաղկեսցին» (Սղմ. ՂԱ. 14):

Եւ ընդէ՛ր ի մտանելն Քրիստոսի յԵրուսաղէմ դղրդեցաւ քաղաքն ամենայն, քանզի կարծէր զնա, թէ սպանաւ ի Հերովդէէ ընդ մանկանցն Բեղդէէմի, իսկ յորժամ ետես զնա կենդանի եւ փառաւք մեծաւ եկեալ յԵրուսաղէմ եւ զաւրհնութիւնս ի տղայոցն եւ ի ծերոցն երգեցեալ նմա եւ զամենայն աւրինակս եւ զնախաճառութիւնս մարգարէիցն կատարեալ ի վերայ Նորա, վասն այնորիկ դղրդեցաւ, վասն զի գիտաց, թէ նովաւ յանդիմանին ծածկեալ անզգամութիւնք նորա:

Եւ⁸⁵ արդ, զայս ամենայն ի Գրոց Սրբոց ուսեալք եւ ի միտ առեալ, ո՛վ եղբարք, պատրաստեալք գործովք բարեաց, ելցուք ընդառաջ Քրիստոսի Աստուծոյ մերոյ երկնաւոր Թագաւորին, եւ տղայացեալք ի չարեաց եւ մտաւք կատարեալք եղեալ, փառաւորեսցուք զնա ոչ միայն ոստս ձիթեն[ե]աց եւ արմաւեն[ե]աց առեալ ի ձեռս մեր, այլ եւ՝ զամենայն գործս բարեաց, երթիցուք ի Բեթանիա՝ ի տուն սգոյ, լալ ընդ լացողսն,

⁸⁴ Ձեռ.՝ հասակտ:

⁸⁵ Ի լուս. ՅԿԴ (= Յորդորակդ):

ցնծասցուք ի յարութիւն Ղազարու՝ խնդակիցք լինելով խնդացելոցն, ելցուք եւ ի լեառն Զիթենեաց՝ ի բարձրագոյն պատուիրանն ողորմութեան, որ զկատարեալ իմաստութիւն շնորհէ, մերկասցուք զհանդերձս մեր՝ զհին մարդն գործովք իւրովք, տարածեսցուք ի ներքոյ յաւանակին՝ սփռելով եւ տարածանելով խոստովանութեամբ եւ արտասուաւք զգործեցեալ մեղս մեր առաջի Աստուծոյ։ Հատցուք ոստս ի ծառոց եւ տարածեսցուք առ ճանապարհան զխոստացեալ եւ զբարձրացեալ խորհուրդս չարին զսերմանեալսն ի սիրտս մեր, հատցուք եւ ի վայրի խոնարհ արկցուք ի ներքոյ ոտից մերոց եւ ըստ այլում արինակի առցուք ի ձեռս մեր զլապտերս լուսոյ, որ է ողորմութիւն առ կարատեալսն։ Ասասցուք հանդերձ ժողովրդեամբ. «Ովսանա, Որդոյ Դաւթի»՝ խոստովանելով զԱստուածութիւն նորա անճառաբար միաւորեալ ընդ բնութեան մերում ճշմարտապէս ի զաւակէ Դաւթի։ «Աւրհնեալ եկեալ ի զաւակէ Դաւթի, արհնեալ եկեալ յանուն Տեառն» (Մտթ. ԻԳ. 39, Ղուկ. ԺԳ. 35) կամաւք Հաւր ի փրկութիւն մեզ։ Մտցուք ընդ նմա ի քաղաքն Երուսաղէմ, մանաւանդ, թէ՛ ի վերինն Երուսաղէմ եւ ոչ ի զաւրականաց կոխան եղեալս, այլ՝ ի նոր Սիոն, որ է եկեղեցի հեթանոսաց, զի մանաւանդ աստ մտանէ Քրիստոս այժմ քան թէ յայնժամ ի տաճարն հրէից, զի եւ սա այսաւր ընդառաջ ելանէ Նմա ոչ ըստ նմանութեան դպրացն եւ փարիսեցւոցն՝ չարութեամբ նախանձու վառեալ, այլ ամենայն առաքինութեամբ լցեալ։ Զի եթէ այսպէս սրբութեամբ եւ առանց դանդաղանաց ընկալցուք մեք զնա՝ ընկալեալ լիցուք մեք ի նմանէ ի միւսանգամ գալստեան Նորա, «որժամ գա Նա փառաւք Հաւր իւրոյ» (Մտթ. ԺԶ. 27, Ղուկ. Ը. 38)՝ հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց, զի զոր արինակ ընդունիմք մեք զնա այսաւր՝ նոյնպէս ընկալցի Նա մեզ յայնմ աւուր, վասն զի զերկոսեան գալուստն յիշատակեմք եւ տանեմք այսաւր, զոր եկն եւ կատարեաց եւ զոր հանդերձեալ է գալ եւ կատարել, զի որպէս եկն եւ փոխարկեաց զստուերն ի նորս, նոյնպէս եւ զայժմուս հանդերձեալսն է փոխարկել։

Արդ, զգուշ⁸⁶ լերուք, եղբարք, գուցէ զԻսրայէլին կրիցեմք, որք կափուցին զաշս մտաց իւրեանց եւ խցին զականջ[ս] իմանալի՝ չնայել ի ճշմարիտ Լոյսն եւ չսեւ զձայն Նորա, այլ կացուք եւ մնասցուք ի ճշմարտութիւն Նորոյ ուխտիս, զոր ընկալաք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ է արհնեալ յաւիտեանս յաւիտենից։

⁸⁶ Զեռ.՝ սգուշ։

ՄԱՐՈՒԹԱՅԻՒՆ ՂԱԶԱՐ⁸⁷

Խնդրելի է, թէ ընդէր Տէրն մերձ առ չարչարանս իւր տնաւրինէ զյարութիւն Ղազարու. որպէս զի մի՛ տեսեալ առաքելոցն զանարգանաւք մահ վարդապետին իւրեանց երկմտեալ ի յուսահատութիւն անկցին, այլ յարութեամբն Ղազարու յուսադրեալք ի միտ առցեն, թէ որ զՂազար չորեքաւրեալ[յ] մեռեալ յարոյց նայ եւ զայլս եւ զանձն եւս կարող է յարուցանել: Այլ եւ ի յարութիւն Ղազարու հաստատեալ լինի նա, թէ ճշմարտապէս մարդ է Աստուած, զի անգիտաբար հարցանելովն. «Ո՞ւր եղիք»՝ (Յովհ. ԺԱ. 34) զստոյգ մարդեղութիւն յայտնեաց, զի այս մարդոյ է, եւ իշխանաբար կոչելովն զմեռեալն զճշմարիտ Աստուածութիւն եցոյց⁸⁸՝ ասելով. «Ղազարէ, եկ արտաքս» (Յովհ. ԺԱ. 43), որ Աստուծոյ միայն վայել է, զի ոչ ըստ աւրինակի մարգարէիցն յանուն Տեառն Աստուծոյ, եւ կամ ըստ առաքելոցն յանուն Յիսուսի Քրիստոսի, այլ իւրով հրամանաւք կոչեաց: Եւ վասն է՛ր արտասուեաց, որ յարուցանելոցն էր: Լուծում. Զի զազգակցութիւն իւր ի մեր վշտակցութիւնս ցուցէ: Եւ դարձեալ, զի սահման եւ կէտ զայն դիցէ հաւատացելոց, որք զյոյս յարութեան ունին յինքեանս, այնքան միայն արտասուել: Դարձեալ, զի ուսուցէ արտասուել ի վերայ մեռելոց զմահ մեղաց, զոր ի սկզբանն⁸⁹ անհնազանդութիւն ժառանգեցոյց: Այլ եւ արտասուեաց զհրէայսն ողբացեալ, որք չէին հաւատացելոց ի նա, որպէս երբեմն ի վերայ Երուսաղէմի ելաց:

Եւ զի՛նչ ասելն. «Ի վերս առէք զվէմդ» (Յովհ. ԺԱ. 39): Լուծումն. Զի ծանրութեամբ վիմին եւ հոտով նեխութեան մեռելոյն ինքեանք իսկ վկայեցեն, թէ ճշմարտապէս մեռեալ էր եւ թաղեալ եւ նեխեալ, եւ սգուտապէս նա յարոյց:

«Հայր, գոհանամ զՔէն» (Յովհ. ԺԱ. 42): Լուծում. Ոչ իբրեւ զկարաւորի//սականութեան(՝)⁹⁰ աղերսէ, այլ զի զհամարձակութիւն Իւր եւ զմիութիւն ընդ Հաւր ցուցցէ, եւս զի յամալթ արասցէ զնոսա, որք հակառակ զնա Հաւր կարծէին: Եւ այս յայտ է յասելոյն, թէ՛ «զի ժողովուրդս հաւատացեն, թէ Դու առաքեցեր զիս»:

⁸⁷ Աղբիւր. ՄՄ, ձեռ. 1247, Թ. 237ա — 238ա:

⁸⁸ Ի լուս. ուղղուած. յայտնեաց:

⁸⁹ Ձեռ.՝ սկզբանն:

⁹⁰ Թերեւս, սակս տկարութեան:

Զինչ բարձրաձայն գոչելն՝ «Ղազարէ»։ Եւ ահա առ մեռեալս չէ ինչ ազդումն⁹¹ ձայնի։ Լուծումն. Զի ընթացեալ աստուածային հրամանն ի ձեռն բարձրաձայնին ի լուր ամենեցուն յայտնի երեւեսցի նորա հրամանաւ եկեալ արտաքս մեռեալն, դարձեալ՝ զի ուսցին կենդանի եւ զգայական⁹² գոլ զհոգիսն, այլ եւ յոյժ հեռաւորք ի մարմնոյն։ Վասն որոյ եւ ըստ սովորութեան կենդանեացս, զի ի բացուստ կացեալսն ձայնիւ զկոչումն գործեն։ Սոյնպէս եւ Քրիստոս ըստ նոցա տկարութեան մատակարարէ ընդեկական սովորութեամբ եւ ձայնին զաւրութեան կոչեաց զմեռեալն՝ լծեալ զհոգին ընդ մարմին եւ զմարմինն ընդ հոգին ի միասին կոչելով ձայնիւ։

ՍՐԲՈՅՆ ՍԱՐՈՒԹԱՅԻ ՃԵՄԱՐՏԱՊԷՍ ՅԱՅՏ ԱՐԱՐԵԱԼ⁹³

Արդ, զայս իմաստութեամբ իմացիր. որ էք հաւատացեալք ի Քրիստոս. Որ ասէ ճշմարտախաւսն զերիս տիւս եւ զերիս գիշերս Փրկչին լինել ի սիրտ երկրի (տե՛ս Մտթ. ԺԲ. 40) այս է. Մի տիւ եւ մի գիշեր անուանէ եւ զերեկոյն հինգշաբաթին եւ զվեց ժամն ուրբաթին։ Եւ երկրորդ տիւ եւ գիշեր անուանէ զխաւարն, որ եղեւ ի վեց ժամէն մինչեւ ցինն ժամն եւ զլուսն, որ յինն ժամէն եւ մինչեւ ցմուտն արեւոյն։ Եւ երրորդ տիւ եւ գիշեր ասի երեկոյն ուրբաթին, «յորում լուսանայր շաբաթն», եւ ցերեկ նորա մինչեւ ցերեկոյ նորին, յորում շարժումն եղեւ, ըստ Մատթէոսի Աւետարանին։ Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

ՍԱՐՈՒԹԱՅԻ ԱՍԱՅԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՈՍԿԵՐԱՅՆ ԱՂԱՍԱՅ ԵՒ ԵԻԱՅԻ⁹⁴

Եբրայեցւոցն պատմեն զիրք եւ ասեն, թէ զոսկերսն Ադամայ եւ Եւայի նախայհայրքն ունէին եւ ընդ իւրեանս շրջեցուցանէին, որպէս Յովսէփայն՝ Իսրայելացիքն, եւ եկին մինչեւ ի Մելքիսեղեկ։ Եւ նորա լծեալ զերինջսն եւ եղեալ ի վերայ սայլիցն՝ անցուցանել ընդ Բեթղեհէմ///:

⁹¹ Զեռ.՝ ասդումն։

⁹² Զեռ.՝ սգայական։

⁹³ Աղբիւր. ՄՄ, ձեռ. 6617, թ. 3ա։

⁹⁴ Աղբիւր. ՄՄ, ձեռ. 6617, թ. 254ա — 255բ։

Р Е З Ю М Е

В средневековой сирийской литературе известны два автора под именем «Марута». Первый из них — автор агиографического сборника «Восточные мученики» Марута Майферкатский (†420 г.), второй — книжник VI—VII веков патриарх города Тагрита (640—649), который известен своими антихалхедонскими взглядами. Поэтому весьма закономерен интерес армянских церковных книжников к его наследию. В статье впервые публикуются армянские переводы отрывков толкования Евангелия Маруты Тагритского.

SUMMARY

In the medieval Syriac literature, two authors are known under the name of “Maruta”. The first one is Maruta of Mayferkat (†420), the author of the hagiographic collection entitled Eastern Martyrs. The second scholar of the 6th—7th centuries was the patriarch of the city of Tagrit (640—649) known for his anti-Chalcedonian views. Therefore, the interest of the Armenian Church scholars in his written heritage is quite natural. In this article, Armenian translations of excerpts from the Commentary on the Gospel of Maruta of Tagrit are published for the first time

